ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 570-Ա «30» հունվարի 2026թ.

ԱՆՈՒՇ ԳՐԻՇԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.153 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 130-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունվարի 15-ի հ. Ն/1995-26 ծանուցումը, ինչպես նաև Անուշ Սարգսյանի հետ 2021 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետի «դ» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-ին կետը՝

1. Անուշ Գրիշայի Սարգսյանին՝ 2026 թվականի հունվարի 30-ից ազատել «Երևանի Ռաֆայել Իշխանյանի անվան հ.153 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Ռաֆայել Իշխանյանի անվան հ.153 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Աստղիկ Ոսկանյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ